ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 06.07.2020թ.),

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 06.07.2020թ.),

քննելով Շնողի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Շնող համայնքի Շնող բնակավայրի «ՇԵԿ ԱՂԲՅՈՒՐ», «ՎԱՐԴՈՒՏ», «ՉԱԼԵՐ» թաղամասերի, ԹԵՂՈՒՏ ԵՎ ՔԱՐԿՈՊ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ. ներկայացված (03.07.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/61 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Երվադա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Շնողի համայնքապետարանի կարիքների համար՝ Շնող համայնքի Շնող բնակավայրի «ՇԵԿ ԱՂԲՅՈՒՐ», «ՎԱՐԴՈՒՏ», «ՉԱԼԵՐ» թաղամասերի, ԹԵՂՈՒՏ ԵՎ ՔԱՐԿՈՊ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին հայտեր ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. հունիսի 26-ին, ժամը 14:00:

www.gnumner.am համացանցային կայքում 29.06.2020թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է Պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որտեղ գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին և հայտարարվել է անգործության ժամկետ 10 օրացուցային օր:

Այնուհետև www.gnumner.am համացանցային կայքում 01.07.2020թ. հրապարակված նոր տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է հայտերի բացման նոր արձանագրություն, նոր կայացված որոշումներով, այդ թվում նաև բանակցություններ հրավիրելու վերաբերյալ՝ առանց վերացնելու պայմանագիր կնքելու մասին որոշումը և դադարեցնելու անգործության ժամկետի ընթացքը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ

նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հրավերի 8.6 կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Շինարարական ծրագրերի գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները ...:

Հրավերի 8.21 կետի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Հրավերի 8.22 կետի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա.

26.06.2020թ. տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությամբ ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ն:

ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն գնահատող հանձնաժողովը, առանց մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման, որոշում է կայացրել հաղթող մասնակից ճանաչել «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 29.06.2020թ. հրապարակվել է Պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որտեղ գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված/հաղթող մասնակից ճանաչել «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին և հայտարարվել է անգործության ժամկետ 10 օրացուցային օր:

Այնուհետև www.gnumner.am համացանցային կայքում 01.07.2020թ. հրապարակված նոր տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է հայտերի բացման նոր արձանագրություն, նոր կայացված որոշումներով՝ առանց Պայմանագիր կնքելու մասին որոշումը չեղարկելու և սահմանված անգործության ժամկետը դադարեցնելու:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Հրավերի 8.6, 8.21 և 8.22 կետերով սահմանված

դրույթները, ըստ որի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր Հայտերի բացման նիստի ավարտից հետո՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին ծանուցել գների նվազեցման բանակցությունների՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով:

Մինչդեռ ունենք իրավիճակ, որ արդեն ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշել է հաղթող մասնակցին, հայտարարել անգործություն և անգործության ժամկետի 6-րդ օրը որոշում է կայացրել նաև մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, որի պարագայում անգործության ժամկետի ավարտից հետո կունենանք այնպիսի իրավիճակ, որ պայմանագրի նախագիծը կներկայացվի ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հաղթող մասնակից ճանաչված «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ն, իսկ անգործության ժամակահատվածում նշանակված գների նվազեցման բանակցությունների արդյունքում ավելի ցածր գին առաջարկած մասնակիցը՝ իր ներկայացրած գնային առաջարկով կմնա առանց պայմանագրի նախագծի և չի կարող վերջինիս հետ Պատվիրատուն կնքի պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է չկայացած հայտարարել Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի Շնող բնակավայրի «ՇԵԿ ԱՂԲՅՈՒՐ», «ՎԱՐԴՈՒՏ», «ՉԱԼԵՐ» թաղամասերի, ԹԵՂՈՒՏ ԵՎ ՔԱՐԿՈՊ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթը:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանին խնդրում ենք ուսումնասիրել Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, թե արդյոք «ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06» ծածկագրով ընթացակարգի հրավերը հրապարակվել է մինչև գնումների պլանը հաստատվելը, թե սկզբում հրապարակվել է հրավերը, իսկ այնուհետև հաստատվել գնումների պլանը, կամ ընդհանրապես այն հրապարակվել է թե ոչ, որպիսզի պայմաններում գտնում ենք, որ ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքերի, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները (մեր ունեցած տեղեկատվության համաձայն՝ այն ընդհանրապես հրապարակված չէ):

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ բողոքներ:

Օրինակ՝ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/102 բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքո սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է, մինչդեռ արձանագրում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ևս մեկ անգամ խնդրում ենք՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 03.07.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/61 բողոքը բավարարել նաև վերոշարադրված հիմքով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>Շնողի համայնքապետարանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

Շնողի համայնքապետարանը 07.07.2020թ. թիվ 411 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր՝ 03 հուլիսի 2020 թվականի թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/10018-2020 գրության՝ տեղեկացնում ենք, որ ս/թ. հունիսի 11-ին հայտարարվել է Շնողի համայնքապետարանի կարիքների համար ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթ: 26 հունիսի 2020 թվականին՝ հայտերի բացման նիստին «ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ն, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ն, «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ն: Հայտերի բացման նիստում արձանագրվել է, որ ներկայացված հայտերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ի ներկայացված հայտի, քանի որ վերջինիս ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված նախահաշվային գինը, հայտից բացակայում էր հրավերի 2.6 կետով սահմանված իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, սակայն հիմք ընդունելով ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 8.7 կետը՝ ներկայացված հայտերը գնահատվել են բավարար և մասնակիցները 2020 թվականի հուլիսի 03-ին ժամը 14:00-ին հրավիրվել են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների /կցվում են բանակցություններին մասնակցելու համար հրավերները էլեկտրոնային փոստով ուղարկված լինելու փաստը հավաստող լուսանկարներ/: Հրավերները էլ. փոստով ուղարկելուց հետո գնահատող հանձնաժողովի քարտուղարի

կողմից զանգ է կատարվել մրցույթի բոլոր մասնակիցներին՝ ճշտելու համար գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին մասնակցելու հրավեր-գրությունների ստացած լինելու փաստը: Բոլոր մասնակիցները հավաստել են, որ ստացել են Շնող համայնքի ղեկավարի կողմից 01 հուլիսի 2020 թվականին իրենց հասցեագրված գրությունները /կցվում են/: (Երվադա ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցության նիստին):

«Գնումների մասին» 50-րդ հոդվածի 4-րդ մասով առաջնորդվելով՝ Ձեզ ենք ներկայացնում Շնողի համայնքապետարանի կարիքների համար 2020 թվականի հունիսի 11-ին հայտարարված ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի թղթային ձևով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը՝ 06 հուլիսի 2020 թվականի դրությամբ: Ներկայացնում ենք նաև Շնողի համայնքապետարանի կողմից կազմակերպված ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակում գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը (Շնողի համայնքապետարանի 2020 թվականի փոփոխված գնումների պլանը տեսնելու համար անցեք հետևյալ հղումով՝ http://www.gnumner.am/website/images/original/gnumneri%20plan%20popoxvac%20hunis.pd»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի Շնող բնակավայրի «ՇԵԿ ԱՂԲՅՈՒՐ», «ՎԱՐԴՈՒՏ», «ՉԱԼԵՐ» թաղամասերի, ԹԵՂՈՒՏ ԵՎ ՔԱՐԿՈՊ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով

հայտեր են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերությունների ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար:

4. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ, «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերություններին հրավիրել է միաժամանակյա բանակցությունների հուլիսի 3-ին ժամը 14:00-ին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից հունիսի 26-ին ժամը 14:00-ին կազմվել է սխալ արձանագրություն, քանի որ պետք է նշվեր ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 15-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներով, առաջնորդվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, բավարար գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 2020 թվականի հունիսի 26-ի հայտարարությունը հայտարարել չեղյալ:

6. Նույն արձանագրության 1.2 ենթակետով արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությունները, որոնց հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան՝ գնահատվել են բավարար, բացառությամբ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված նախահաշվային գինը, հայտից բացակայում էր հրավերի 2.6 կետով սահմանված իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

7. Նույն արձանագրության 1.5 ենթակետի համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

8. Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ամփոփելով գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքները, «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից և սահմանել անգործության ժամկետ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի 03.07.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, և ի լրումն բողոքի գրությունը, Շնողի համայնքապետարանի 07.07.2020թ. թիվ 411 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***<u>ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:</u>***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>***, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը **<u>մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային</u>**

<u>առաջարկը,</u> կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ ***<u>գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝</u>***

ա. ***ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ***, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. ***<u>բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում</u>***

գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընթացակարգի հրավերի 2 կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի

համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Շնողի համայնքապետարանի կարիքների համար Շնող համայնքի Շնող բնակավայրի «ՇԵԿ ԱՂԲՅՈՒՐ», «ՎԱՐԴՈՒՏ», «ՉԱԼԵՐ» թաղամասերի, ԹԵՂՈՒՏ ԵՎ ՔԱՐԿՈՊ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.06.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերությունների ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ, «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերություններին հրավիրել է միաժամանակյա բանակցությունների հուլիսի 3-ին ժամը 14:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.06.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից հունիսի 26-ին ժամը 14:00-ին կազմվել է սխալ արձանագրություն, քանի որ պետք է նշվեր ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 15-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթներով, առաջնորդվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, բավարար գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 2020 թվականի հունիսի 26-ի հայտարարությունը հայտարարել չեղյալ:

Նույն արձանագրության 1.2 ենթակետով արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությունները, որոնց հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան՝ գնահատվել են բավարար, բացառությամբ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված նախահաշվային գինը, հայտից բացակայում էր հրավերի 2.6 կետով սահմանված իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Նույն արձանագրության 1.5 ենթակետի համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ամփոփելով գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքները, «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից և սահմանել անգործության ժամկետ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ արձանագրում եմ հետևյալը.

03.06.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից հունիսի 26-ին ժամը 14:00-ին կազմվել է սխալ արձանագրություն և 2020 թվականի հունիսի 26-ի հայտարարությունը (գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրություն) հայտարարել է չեղյալ:

01.07.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրությունը թողել է անփոփոխ, որի 3-րդ կետով արձանագրել է, որ «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ և «Երվադա» ՍՊ ընկերությունների ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար, որից հետո, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ «ՍՆԱՌՏ» ՍՊԸ-ին, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ին, «ԵՎՐՈՊԱ» ՍՊԸ-ին, այդ թվում նաև՝ «Երվադա» ՍՊԸ-ին հրավիրել է միաժամանակյա բանակցությունների՝ հուլիսի 3-ին ժամը 14:00-ին:

Այնուհետև՝ 03.06.2020թ. նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՆԱՌՏ» ՍՊ, «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ, «ԵՎՐՈՊԱ» ՍՊ ընկերությունները, որոնց հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան, գնահատվել են բավարար, բացառությամբ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված նախահաշվային գինը, հայտից բացակայում էր հրավերի 2.6 կետով սահմանված իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը և արձանագրության 1.5-րդ ենթակետի համաձայն՝ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Ընթացակարգի հրավերի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը պետք է հայտով ներկայացնի իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***:

Այսպես՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ, ենթակա են շտկման, միաժամանակ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է շտկման անթույլատրելիություն՝ որոշ բացառություններով, միայն գնային առաջարկի մասով, այսինքն՝ մնացած բոլոր դեպքերում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման պահանջը:

Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ գտնում եմ, որ վերջիներիս կողմից թույլ են տրվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, Կարգի 41-րդ կետով և Կարգի 42-րդ ենթակետով և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ 01.07.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրությամբ «Երվադա» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար, այն դեպքում երբ վերջինս հայտով չէր ներկայացրել Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանված՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, տվյալ դեպքում պետք է հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում կիրառվեր Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը և վերջինիս տրվեր հայտում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, որից հետո նոր միայն կիրառվեր Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջը, մինչդեռ արձանագրում եմ, որ նիստի թիվ 2.1 արձանագրությամբ Ընկերության հայտը գնահատվել է բավարար, այնուհետև նույն արձանագրությամբ ծանուցվել է միաժամանակյա բանակցությունների վարման վերաբերյալ, որից հետո նոր միայն նիստի թիվ 2.2 արձանագրությամբ արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի 2.6-րդ ենթակետի մասով և անմիջապես՝ առանց շտկման հնարավորություն տալու՝ համաձայն 2.2 արձանագրության, մերժվել է վերջինիս հայտը:

Այսպիսով՝ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել 26.06.2020թ. թիվ 2 արձանագրությունը, բացառությամբ՝ 1-ին կետի (Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին), ինչպես նաև 01.07.2020թ. թիվ 2.1 և 03.07.2020թ. թիվ 2.2 արձանագրությունները, և «Երվադա» ՍՊԸ-ի հայտի նկատմամբ պետք է կիրառվեն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ նման պայմաններում խախտվում են նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ «Երվադա» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված պահանջին, ապա գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տրված Ընթացակարգային խախտումները բավարար հիմք չեն ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06 ծածկագրով հրատապ բաց մրցույթը չկայացած հայտարարելու համար, քանի որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշմամբ խախտումներով իրականացված գնահատող հանձնաժողովի որոշումները կդադարեցվեն և կիրականացվի հայտերի գնահատում:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից ի լրումն բողոքի ներկայացված այն դիտարկմանը, որ հնարավոր է, որ Պատվիրատուի կողմից համապատասխան գնումների պլանը տեղեկագրում հրապարակված չէ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և (procurement.am) տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է 09.06.2020թ., իսկ Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը՝ 12.06.2020թ., այսինքն՝ առկա է Ընթացակարգի կազմակերպման իրավական հիմքը:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

2. Պարտավորեցնել «ԼՄՇՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/06» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.06.2020թ. թիվ 2 արձանագրությունը, բացառությամբ 1-ին կետի (Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին), 01.07.2020թ. թիվ 2.1 և 03.07.2020թ. թիվ 2.2 արձանագրությունները:

3. Սույն որոշման հիմնավորման շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի մասով կիրառել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**